Հ. Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅՐԵՆԻՔ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ԳԱՂԱՓԱՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ - ԻՐԱՎԱԿԱՆ ՄԱՐՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Տարագրված ժողովուրդների համար, դարեր շարունակ, Հայրենիք վերադառնալու գաղափարը եղել է սոսկ գաղափար, ազգային բաղձանք և չի դարձել միջազգային իրավական նորմ: Այժմ էլ չկան վերադարձի իրավունքը միջազգայնորեն հաստատող հատուկ կոնվենցիաներ և այլ փաստաթղթեր: Այսօր, Հայրենիք վերադառնալու իրավունքն իբրև միջազգային-իրավական նորմ, հանդիպում է զանազան կոնվենցիաներում և արձանագրություններում: Ավելի կոնկրետ դեպքերի համար՝ երկկողմ և բազմակողմ պայմանագրերում, առանձին դրույթների կամ հոդվածների ձևով շարադրված է մարդու իրավունքներին և հիմնական ազատություններին վերաբերող համընդհանուր նշանակության միջազգային փաստաթղթերում:

Բնականաբար, երբ հայրենազրկությունը հետևանք է ցեղասպանության ու բռնագաղթի, ինչպես հայերի պարագայում, զանգվածային վերադարձը Հայրենիք կարող է լինել ոչ միայն ազգային դատի արմատական լուծման արգասիք, ինչպես դա տեղի ունեցավ հրեաների պարագայում, այլև ինքնուրույն քննարկման և կարգավորման առարկա, օրակարգից չհանելով ազգային դատը (օրինակ՝ Հայ դատը) ամբողջությամբ վերցրած:

Բացն այն է, որ Հայրենիք վերադառնալու խնդիրը կարող է լուծվել կապված այս կամ այն պետության մեջ կատարված միջազգային ոճրի համար նրա պատասխանատվության հետ, եթե նույնիսկ տեղի են ունեցել քաղաքական լուրջ փոփոխություններ այդ պետության կյանքում, ընդուպ մինչև նոր կարգերի հաստատումը: Նման դեպքերում միջազգային ոճրի, մասնավորապես ցեղասպանության (գենոցիդ) հետևանքների՝ բռնի տեղահանության (դեպորտացիա), հայրենազրկման (ապոլիդիզմ, ապատրիդիզմ), փախստականների պրոբլեմների վերացման պահանջը բխում է միջազգային-իրավական համապատասխան սկզբունքներից ու նորմերից և կարող է կարգավորվել՝ մինչև խնդրի ամբողջական ու արմատական լուծումը:

Եթե տարագրված ժողովրդի ազգային դատն ամենա արմատական լուծում, ինչպես հրեաների պարագայում, ապա Հայրենիք վերադառնալու և ազգային պետականություն վերածնելու խնդիրները կլուծվեն միաժամանակ և առանց ինքնորոշման ակտի անհրաժեշտության: Հակառակ դեպքում, եթե Հայրենիք վերադառնալու իրավունքը ճանաչվում է առանց ազգային-պատմական տարածքում սեփական պետականություն ունենալու իրավունքի, ապա դա ապացուցում է, թե վերադարձի իրավունքի ճանաչումը դեռևս չի նշանակում ճանաչել տարագրված ժողովրդի ինքնորոշման իրավունքը: Մինչդեռ, Հայրենիք վերադառնալու իրավունքի մերժումը հավասարազոր է ինքնորոշման իրավունքը մերժելուն՝ առհասարակ: Այդ դեպքերում, ինչպես իրավամբ նկատում է Յու. Բարսեղովը, կշռաքաշվեն նաև պետության և անձի հարաբերությունները, քանզի չի կարող խոսք լինել մարդու իրավունքների ու ազատությունների մասին, եթե չի ճանաչվում նրա կոլեկտիվ իրավունքը, ժողովրդի ինքնորոշման իրավունքը, և, ընդհակառակը, անկարելի է իրականացնել ինքնորոշման իրավունքը, եթե խախտվում են մարդու իրավունքները:

Այդ փոխադարձ կապը և երկկողմանի պայմանավորվածությունը մատնանշում է, մասնավորապես ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1952 թ. դեկտեմբերի 16-ի 637 (VII) բանաձևը, որի մեջ նշվում է, որ «ժողովուրդների ինքնորոշման իրավունքը նախապայման է հանդիսանում մարդու՝ բոլոր հիմնական իրավունքներից օգտվելու համար»[1]:

Բայց Արևմուտքի մեծապետական դևմոկրատիզմով տառապող կա-

1 *Ю. Г. Барсегов, Право на самоопределение- основа демократического решения межнациональных проблем. Sbn K проблеме Нагорного Карабаха, Ереван, 1989, с. 28.*

ռավարություններին չի հետաքրքրում վերոհիշյալ փոխադարձ կապը և պայմանավորվածությունը: Նրանց համար շատ ավելի կարևոր է ՆԱՏՕ-ական դաշնակցային կապը Թուրքիայի հետ: Կասկածից դուրս է, որ եթե ԵԱՀԽ-ն փորձեր ճանաչել բռնագաղթված ժողովուրդների՝ Հայրենիք վերադառնալու իրավունքը, ապա կհանդիպեր Թուրքիայի կատաղի դիմադրությանը: Սակայն, նման փորձ չի արվել ո՛չ Հելսինկիում, ո՛չ Մադրիդում, ո՛չ Վիեննայում, և ո՛չ էլ՝ Փարիզում: Մինչդեռ բռնագաղթվածների պարագան, անկախ հայերի խնդրից, պետք է լինի մարդու իրավունքների պաշտպանների հավակնություն ունեցող պետությունների և նրանց միջկառավարական կազմակերպությունների՝ ՄԱԿ-ի և ԵԱՀԽ-ի մտահոգության առաջնահերթ առարկան, իբրև առանձնահատուկ կարևորության խնդիր: Ըստ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Բուտրոս-Ղալիի՝ ընչազրկության, հիվանդությունների, սովի, հալածանքների, հուսահատության և զինված կոնֆլիկտների հետևանքով աշխարհում կան 17 միլիոն փախստականներ և 20 միլիոն տեղահանվածներ[1]: Մեր համոզմամբ, այս թվերը չեն ընդգրկում ափյուռքահայությանը, թեև Բուտրոս Բուտրոս-Ղալին քաջատեղյակ է հայ ժողովրդի ողբերգությանը: Եվ չի կարելի այդ խնդիրը դիտարկել մարդու, և ո՛չ ժողովուրդների իրավունքների տեսանկյունից, քանզի «մարդու իրավունքների, անձի արժանապատվության նկատմամբ հարգանքի զարգացումը կապված է ժողովուրդների իրավունքների նկատմամբ հարգանքի զարգացման հետ»[2]:

Միջազգային իրավունքը չի կարող բռնագաղթի ենթարկվածներին և փախստականներին չտարբերակել մնացած տարագիրներից: Այդ տարբերակումն ինքնին անհրաժեշտ է թեկուզ այն պատճառով, որ բռնագաղթն ու փախստականությունն ուղեկցում են ծանրագույն միջազգային ոճրին՝ ցեղասպանությանը, թեև «Ցեղասպանության հանցանքը կանխարգելելու և այդ հանցանքի համար պատժելու մասին կոնվենցիայում» բռնագաղթն ու ցեղասպանությունը ուղղակիորեն չեն հիշատակվում որպես ցեղասպանության գործողություն և կամ էլ նման գործողությունների հետևանք: Բայց, դրանք կարող են ընկնել կոնվենցիայի երկրորդ հոդվածի երրորդ կետի տակ, որտեղ իբրև ցեղասպանության գործողություն նշվում է, «Որևէ խմբի համար կանխամտածված կերպով կենսական այնպիսի պայմանների ստեղծելը, որոնց նպատակն է այդ խմբի լիովին կամ մասնակի ոչնչացումը»[1]:

Սակայն գլխավորն այն է, որ, ինչպես գրում էր Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպանը՝ Հ. Մորգենթաուն, թուրքերի հիմնախնդիրը ոչիշ ժողովուրդների հայրենիքներին տիրանալն էր, որպեսզի քոչվոր նվաճողն իրեն մեկընդմիշտ հանգիստ զգար այդ ժողովուրդների՝ իրենց հայրենիքները վերստանալու պահանջի դեպքում: «Աբդուլ Համիդը,- գրում է Մորգենթաուն,- հայկական խնդրի լուծման միակ ուղին տեսնում էր հայերից ազատվելու մեջ: 2 միլիոն մարդկանց ֆիզիկական բնաջնջումը կազմակերպված և ուղղորդված պետության կողմից, նա պատկերացնում էր իբրև միակ հուսալի ուղին՝ կանխարգելու թուրքական կայսրության անկումը»[2]: Իսկ հետո կարելի է ոչնչացնել բոլոր հույներին, ասորիներին և մյուս քրիստոնյաներին, «նրանց տներում բնակեցնել մահմեդական ընտանիքներ և այն ժամանակ վստահ լինել, որ այդ հողերը կմնան թուրքական»[3]:

Բնական է, բոլորին ոչնչացնել անկարելի է, և ողջ մնացածները տարագրվում են, դառնում հայրենազուրկ: Բայց նրանց և նրանց սերունդների համար Հայրենիք վերադառնալու գաղափարը դառնում է համազգային մտածելակերպի առանցքը:

Մի առիթով, ԱՄՆ-ի նախկին նախագահ Ռոնալդ Ռեյգանը նկատել է, որ ամերիկյան ազգը ներգաղթողների (իմիգրանտների) ազգ է, նկատի ունենալով Իռլանդիայից, Շոտլանդիայից, Սկանդինավյան երկրներից, Գերմանիայից, Իտալիայից, Հունաստանից և Եվրոպայի այլ երկրներից, Լատինական Ամերիկայից և Ասիայից ներգաղթածներին, որոնք ԱՄՆ են եկել երջանկություն, առնվազն տանելի կյանք գտնելու ակնկալությամբ, և քաղաքական վտարանդիներին, որոնք Ամերիկայի հեռավոր ափերն են հասել իրենց երկրներում հաստատված վարչակարգի հետ անհամաձայնության և հետապնդումների հետևանքով: 1982 թ. հունիսի 8-ին անգլիական պառլամենտում Ռեյգանը խոսեց միլիոնավոր փախստականների մասին, որոնք փախչում էին կոմունիստական աշխարհից[4]: Բայց Ռեյգանը, որը երկու ժամանակամիջոց եղել է Կալիֆոռնիայի նահանգապետ և քաջատեղյակ է Հայ դատին (նա նույնիսկ ե-

1 Տե՛ս Բուտրոս Բուտրոս-Ղալի. Օրակարգ խաղաղության համար. Երևան, 1993. էջ 6:
2 Курс международного права, т. 2, М.,1980, с. 150.

1 Курс международного права, т. 2, с. 150.
2 Информационно-ежемесячный бюллетень «Объектив», Агенство «София-пресс», 1988, N 3, июль, с. 15:
3 Նույն տեղում. էջ 16:
4 Talbott Strobe. The Russians and Reagan. New-York, 1984. p. 95.

լույթ է ունեցել Մեծ եղեռնի զոհերի հուշարձանի մոտ Մոնթեբելոյում), լավ գիտե, որ ներկայումս ԱՄՆ-ում ապրող հայերի հիմնական զանգվածը չի պատկանում իմիգրանտների ոչ մեկ և ոչ էլ մյուս խմբին: ԱՄՆ-ի հայ գաղութը հիմնականում կազմում են Օսմանյան կայսրությունից բռնագաղթվածները և նրանց սերունդները (արդեն՝ երրորդ սերունդ), ովքեր պատկանում են տարագիրների այն տեսակին, որը պետք է տարբերակվի բոլորից, քանզի նրա համար՝ Հայրենիք վերադառնալու գաղափարն ունի միանգամայն այլ իմաստ ու նշանակություն: Մեզ թվում է, թե կա ուղղակի կապ ԱՄՆ-ի կառավարողների և բռնագաղթվածների՝ Հայրենիք վերադառնալու իրավունքը ճանաչելու միջև: Քրիստոֆեր Ուոքերը մատնանշում է, որ ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի 1982 թ. բյուլետենում հայերի ցեղասպանության վերաբերյալ խոսակցությունները համարվում են «չհիմնավորված»:

Ժխտելով ցեղասպանության փաստը, ուրանում են այն զարհուրելի ճշմարտությունը, որ թուրքական իշխանությունները հայերի ֆիզիկական բնաջնջումը և նրանց արտաքսումն իրենց ազգային պատմական բնօրրանից դիտել են իբրև Հայ դատին մեկընդմիշտ վերջ տալու ամենաարմատական միջոցը: Թալեաթ փաշային սպանող Սողոմոն Թեհլերյանին արդարացնելու պատճառներին ճվիրված հոդվածում «Հայաստան-Ամերիկա» ընկերության նախագահ Ջորջ Մոնթգոմերին «Նյու-Յորք Թայմս» թերթի ամսական հանդեսի՝ «Քարլընթ Հիսթորի» 1921 թ. հուլիսյան համարում գրում էր, որ փաստաթղթերը մեկընդմիշտ հաստատել են, որ թուրքական իշխանությունների նպատակը հայերին տարագրելը չի եղել, այլ՝ բնաջնջելը[1]: Հայերին իրենց բնօրրանից արտաքսելու քաղաքականություն են որդեգրել նաև Ադրբեջանի ղեկավարները՝ կոմունիստներից մինչև ազգայնականները և ազատամտական ժողովրդավարները: Դեռևս 1990թ. սկզբին, լեհ լրագրող Ռիշարդ Կապուսցինսկին՝ Լեռնային Ղարաբաղ այցից հետո «Ռեչ Պոսպոլիտա» պարբերականում տպագրված հարցազրույցում, որը թարգմանաբար արտատպել է «Եվրոպա+Ամերիկա» հանդեսը, նկատել է. «Ադրբեջանի իշխանությունները ակտիվ քաղաքականություն են վարում, որն ուղղված է Ղարաբաղի բնակչության կառուցվածքի փոփոխությանը: Զանգվածային չափերով ծավալվում է ադրբեջանական շինարարությունը, Ղարաբաղում վերաբնակեցնում են ադրբեջանցիների....: Իրականացվում է կատարված փաստի քաղաքականություն»[2]:

1 The Armenian Genocige. (1915-1922). Berkeley. California. 1985. p. 348.
2 «Европа+Америка», N 1, с. 37

Պիեռ Վեղուիզը նույնպես, Լեռնային Ղարաբաղից վերադառնալուց հետո, հաստատեց այդ իրողությունը, շեշտելով, որ Ադրբեջանի կիրառած միջոցառումները կոչված են հայաթափելու երկրամասը՝ փորձելով այն «ադրբեջանականացնել»:

Դժբախտաբար, թուրքերի դիրքորոշումը պաշտպանություն է գտնում Արևմուտքի որոշակի պետական և գիտական շրջաններում: 1987 թ. նամակների փոխանակությունը Հայ բարեգործական ընդհանուր միության նախագահ Ալեք Մանուկյանի և ԱՄՆ-ի պետական քարտուղար Ջորջ Շուլցի միջև ցույց տվեց, որ պաշտոնական Ամերիկան մեկնաբանում է ցեղասպանության փաստը, ըստ էության, թուրքական դիրքերից, պնդելով , որ տեղի են ունեցել պատերազմների ժամանակ անխուսափելի միջհամայնքային ընդհարումներ, որոնց ժամանակ հավասարապես տուժել են թե՛ հայերը, թե՛ թուրքերը և թե՛ քրդերը: Ինչ վերաբերում է գիտական աշխարհին, ապա այստեղ հատկապես բնութագրող է հետևյալ փաստը. ամերիկյան վաթսունհինգ ակադեմիականներ, որոնք թուրքական, Օսմանյան և Միջին Արևելքի պատմության մասնագետներ են, ԱՄՆ-ի ներկայացուցիչների պալատին՝ 1985 թ. հղած նամակում գրում էին, թե իրենք վերապահումներ ունեն 1915-1923 թթ. պատահածը «ցեղասպանություն» բառով որակելու առթիվ[1]:

Անգլիայում Ք. Ուոքերի՝ «Մոսկվան կույր աչքով է նայում ահաբեկությանը» հոդվածի առթիվ («Թայմս», 23 հունվարի 1990 թ.) Քեմբրիջի համալսարանի Միջինարևելյան հետազոտությունների կենտրոնի մասնագետ Մեթին Քումթը, իր զարմանքը հայտնելով այն առթիվ, որ Ուոքերը տեսնում է սերտ կապ ղարաբաղյան կոնֆլիկտի և Հայ դատի միջև, զարմանալի ու անհեթեթ է համարում, որ Ուոքերը փնտրում է տարածքային փոխհատուցում Թուրքիայից՝ ցեղասպանության և դրա հետևանքների համար, երբ, ըստ Քումթի, ցեղասպանության գործընթացում «ցավալիորեն հարյուր հազարավոր հայեր են զոհվել, բայց և շատ թուրքեր մեռել են հիվանդություններից և սովից»[2]:

Իրապես, Թուրքիայի մարդկային կորուստները համեմատաբար մեծ են եղել Առաջին համաշխարհային պատերազմում: Թուրքիան պատերազմում կորցրեց 804 հազար զինվոր և սպա՝ սպանված և մահացած, որը նրա բնակչության ընդհանուր թվի (21,7 միլիոն) 3,7%-ն էր կազմում: Այդ

1 Հայերի ցեղասպանության հարցում ԱՄՆ-ի դիրքորոշման մասին մանրամասն տես «Այո է ճշմարտությունը» հոդվածը. «Սովետական Հայաստան». 1988, N 6:
2 «Times». 1990. 31 January.

տեսակետից, պատերազմին մասնակցած պետությունների թվում նա երրորդն էր, թեև զոհերի բացարձակ քանակությամբ՝ հինգերորդը: Նա երկրորդ տեղում էր նաև 15-49 տարեկան տարիք ունեցող զոհերի թվով[1]:

Սակայն, նախ, երիտթուրքերի իրականացրած հայերի ցեղասպանության զոհերի թիվը երկու անգամ ավելի է, իսկ այնուհետև, եթե հայերը որևէ առնչություն ունեն Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի զոհերի հետ, ապա միայն այնպես, ինչպես բացատրեց Քրիստոֆեր Ուոքերը 1990թ. հունիսի 5-ին Եվրապառլամենտում ունեցած ելույթում՝ թուրք զինվորները 1916-1917 թթ. ծմռանը Անատոլիայում սովամահ եղան այն պատճառով, որ թուրքական կառավարությունը աքսորել էր հայերի մեծ մասին և այլևս չկար այն բնակչությունը, որը պետք է հաց ածեցներ բանակը կերակրելու համար: Ավելին, քաղաքացիական բնակչության մեջ գյուղերում մեծ թվով զոհեր եղան ընդհանուր համաճարակի հետևանքով, քանի որ հայկական կոտորածների զոհերի դիակները մնացել էին անթաղ: Ուոքերը հայտարարեց, որ այս իրողությունը վկայել է Յոզեֆ Պոմիանկովսկին՝ Ավստրիայի այն ժամանակվա զինվորական կցորդը Թուրքիայում, 1928 թ. հրատարակված հուշագրությունների 165-րդ էջում: Ինչ վերաբերում է 15-49 տարեկան զոհերի թվին, ապա հայերի համար դա բնութագրվում էր պատերազմի սկզբում, Արևմտյան Հայաստանի գրեթե ողջ հայ արական բնակչության բնաջնջմամբ՝ բանակ զորակոչելու միջոցով:

Ինչպես գրում է Հ. Գ. Ինճիկյանը, «սեֆերբերլիքի» (զորահավաքի) օրենքով բանակ պետք է կանչվեին 20-45 տարեկան տղամարդիկ: Սակայն տանում էին ֆիզիկապես առողջ և արտաքնապես կարող մարդկանց՝ նրանց ստորաբաժանումները խառնելով թուրքական ռազմական միավորներին: Յո. Լեփսիուսը, հենվելով Թուրքիայի պատերազմական նախարարի վկայության վրա, ասում է, որ հայերը քաջությամբ կռվել են բոլոր ռազմաճակատներում, բայց հետո զինաթափվել և օգտագործվել են բանակում իրրև բեռնակիրներ և ճանապարհաշինության բանվորներ, սակայն, ամիսներ հետո ոչնչացվել են իրենց մահմեդական «ընկերների» կողմից: Զոհերի ընդհանուր թիվը հասավ 300 հազարի[2]: Հայ բնակչությունը զրկվեց իր առավել կենսունակ, աշխատունակ և ռազմական մասից: Մնում է ավելացնել, որ դրանով երիտթուրքերը իրականացրին մանկածնության կանխարգելումը հայերի ազգային խմբում, որը ցեղասպանության վերաբերյալ 1948 թ. հայտնի կոնվենցիայի 2-րդ հոդվածի 4-րդ կետով ճանաչված է իբրև ցեղասպանության գործողություն, թեև զորակոչված հայերի սպանությունը միաժամանակ ընկնում է նաև հոդվածի 1-ին կետի տակ: Առաջին համաշխարհային պատերազմում թուրքերի մարդկային կորուստների համար հայերին մեղադրելը նպատակ ունի հայությանը ներկայացնել իբրև Թուրքիայի ազգային անվտանգությանը սպառնող տարր, որը Թուրքիայի կառավարությանն իրավունք կտա հրաժարվել հետ ընդունելու բռնագաղթված հայերին և նրանց սերունդներին: 1951 թ. կոնվենցիայի 33-րդ հոդվածը, որը վերաբերում է փախստականներին ատաքսելուն կամ դեպի այն երկրի սահմանը վերադարձնելն արգելելուն, որտեղ նրանց կյանքին վտանգ է սպառնում, հաստատում է, որ այդ արգելքը չի կիրառվում փախստականների նկատմամբ, որոնք, հարգելի պատճառներով, դիտվում են իբրև սպառնալիք երկրի անվտանգությանը[1]: Հասկանալի է, որ խոսքը վերաբերում է այն երկրին, որտեղ փախստականները ապաստան են գտել: Սակայն, նույն պատրվակով, փախստականներին ընդունել կարող է հրաժարվել նաև նրանց նախկին բնակության երկիրը, ինչպես վարվեց Թուրքիայի ներկայացուցիչ Իսմեթ փաշան 1923 թ. Լոզանի խորհրդաժողովում: Բռնագաղթած հայերի զանգվածային վերադարձի դեմ աննահանջ դիրք գրավելով, նրա գլխավորած պատվիրակությունը հայտարարեց. «Թուրքական կառավարությունը, ինչպես և յուրաքանչյուր կառավարություն, պահպանում է անկարգությունների սերմնարդների, հեղափոխականների, մահափորձ կատարողների և, ընդհանրապես, վատագույն տարրերի դեմ անվտանգության միջոցներ ձեռք առնելու իրավունք»[2]: Նույն խորհրդաժողովի ռազմատարածքային հանձնաժողովի 1923թ. հունիսի 4-ի նիստում Իսմեթ Ինենյուն հայտարարեց, որ «թուրքական կատավարությունը հնարավոր չի համարում իր վրա վերցնել պարտավորություններ, որոնք կսահմանափակեն նրա գործողությունների ազատությունը իր տարածքի անվտանգությունն ապահովելու հարցում»[3]:

---

1 С. М. Урланис, Войны и народонаселение Европы, Историкостатистические исследования, М., 1960, с. 392-393.

2 Տե՛ս Հ. Գ. Ինճիկյան. Օսմանյան կայսրության անկումը. Երևան. 1984. էջ 300:

1 Управление Верховного комиссара по делам беженцев и текст конвенции 1951г. о статусе беженцев, ООН-1968, с. 25.

2 Հայաստանը միջազգային դիվանագիտության և տվեալական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923 թթ.). Երևան. 1972. էջ 758 (այսուհետև՝ Հայաստանը..... փաստաթղթերում):

3 Հայաստանը.... փաստաթղթերում. էջ 760:

Իսմեթ Ինենյուն կատարում էր Քեմալ Աթաթուրքի կամքը, որն իր առջև խնդիր էր դրել կատարյալ վախճանի հասցնել ցեղասպանությունն ու բռնագաղթը, Թուրքիան դատարկել ոչ թուրքերից: Նրան շնորհեցին «Ղազի» տիտղոսը, որը նշանակում է «քրիստոնյաներին կործանող»: Դա մահմեդականին մատուցվող ամենամեծ պատիվն էր[1]: Աթաթուրքի եվրոպական կենսագիրները, գրեթե առանց բացառության, չեն մոռանում հիշել նրա հայտարարությունը Իզմիրի հայկական և հունական թաղամասերը հրդեհելու մասին: Իր նստավայրի պատշգամբից դիտելով հրդեհը՝ Աթաթուրքը, ինչպես հաստատում է Հարոլդ Արմսթրոնգը, ասել է. «Դա նշան է այն բանի, որ Թուրքիան թուրքերի համար է»[2]: Աթաթուրքի մեկ այլ կենսագիր՝ Ուիլֆրեդ Թ. Ֆ. Քասլը, գտնում է, որ թուրք ժողովրդի կամքն էր «արտահայտվում առաջնորդի միջոցով, որը մի ժամանակ թե՛ բռնակալ էր և թե՛ ժողովրդավար»[3]: Բայց «ամենաժողովրդավար» թուրքի ժողովրդավարությունը իսպառ չքանում է, երբ գործը հասնում է Թուրքիայի քրիստոնյա փոքրամասնությունների իրավունքների հարցին:

Արդարությունը պահանջում է, որ բռնագաղթածները փոխհատուցում ստանան իրենց կրած տառապանքների, նյութական և բարոյական կորուստների դիմաց: Առաջին հերթին՝ նրանց պետք է վերադարձվեն նրանցից խլված հողը և ունեցվածքը: Սակայն, ժամանակակից միջազգային իրավունքն այդ տեսակետից շատ է թերի: Մինչև իսկ ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1948 թ. դեկտեմբերի 9-ի՝ «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժելու մասին կոնվենցիայի»[4] 19 հոդվածներից և ոչ մեկում ոչինչ չի ասված փոխհատուցման իրավունքի վերաբերյալ, թեև ցեղասպանությունը գրեթե միշտ ուղեկցվել է զանգվածային սպանություններով, բալանով, ունեցվածքի բռնագրավումով և աքսորով: Այս փաստը չի կարող տարակուսանք չհարուցել, քանզի ֆաշիզմի հրեշավոր հանցագործությունների թարմ տպավորությունների ներքո ընդունված այդ կոնվենցիան, հանցագործությունները, որոնք «հասցրեցին բնակչության ամբողջ խմբերի վանգվածային ոչնչացման՝ բացառապես իրենց ռասայական, ազգային, էթնիկական կամ կրոնական պատկանելության պատճառով...»[5] կարելի է

1 H. Armstrong. Grey Wolf. London. 1937, p. 158.
2 Նույն տեղում, էջ 174:
3 Wilfred T. F. Castle. Great Turk. London. 1942, p.118.
4 Տե՛ս «Պայմանագիր ցեղասպանության հանցանքը կանխելու և այդ հանցանքի համար պատժելու մասին». «Անդրանիկ». 1990. 21 ապրիլի:
5 ООН и актуальные международные проблемы. (К 20-летию ООН), Москва, 1965, с. 308.

բնութագրել իրեն հետպատերազմյան շրջանում կնքված սոցիալական բնագավառի ամենաանվերապահ կոնվենցիաներից մեկը: Մասնավորապես, անտեսված է ցեղասպանության հետևանքով բռնագաղթի ենթարկվածների ու փախստականների և նրանց սերունդների՝ Հայրենիք վերադառնալու իրավունքը: Ընդ որում, փոխհատուցման, հատկապես, Հայրենիք վերադառնալու իրավունքը, պետք է ճանաչվի անկախ վաղեմությունից, քանի որ միջազգային հանցագործությունը պատժելի է՝ անկախ ժամանակից: 1968 թ. նոյեմբերի 26-ին «Ռազմական հանցագործությունների և մարդկության դեմ հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետի անկիրառելիության մասին կոնվենցիան», իր առաջին իսկ հոդվածում մարդկության դեմ հանցագործություններ է որակում, անկախ կատարման ժամանակից, «վինված հարձակման կամ օկուպացիայի հետևանքով արտաքսումը և անմարդկային գործողությունները, որոնք հանդիսանում են ապարտեիդի քաղաքականության հետևանք, ինչպես նաև ցեղասպանության հանցագործությունը, որը բնութագրվում է Ցեղասպանության հանցանքը կանխարգելելու և այդ հանցանքի համար պատժելու մասին 1948 թ. կոնվենցիայում, եթե նույնիսկ այդ գործողությունները չեն խախտում այն երկրի ներքին օրենսդրությունը, որտեղ կատարվել են»[1]:

Բայց ցեղասպանության վերաբերյալ կոնվենցիայի երրորդ հոդվածում թվարկված են սոսկ պատժի ենթակա հետևյալ արարքները. «ա) գենոցիդ, բ) գենոցիդ կատարելու նպատակով դավադրությունը, գ) ուղղակի և հրապարակորեն գրգռելը գենոցիդ կատարելու համար, դ) գենոցիդ կատարելու փորձը, ե) գենոցիդին հանցակից լինելը»[2]: Սակայն ոչ մի խոսք ցեղասպանության հետևանքների դիմաց փոխհատուցելու մասին: Ավելին, մինչև իսկ 1987 թ. հունիսի 18-ին, Ստրասբուրգում, Եվրապառլամենտի ընդունած Հայկական բանաձևը (10. Հայկական հարց, փաստաթուղթ N A2-33/87, բանաձև Հայկական հարցի քաղաքական լուծման վերաբերյալ) երկրորդ կետում հավաստելով, «թե 1915-1917 թթ. տեղի ունեցած ողբերգական դրվագները Օսմանյան կայսրության տարածքի վրա ապրող հայերի կապակցությամբ հանդիսանում է ցեղասպանություն՝ 1948 թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ընդունած համաձայնության (Կոնվենցիայի- Հ.Հ.) հիման վրա (ցեղասպանության ոճիրի կանխարգելման և պատժման)» ընդունում է սակայն,

1 Международная защита прав и свобод человека, с. 635.
2 «Անդրանիկ». 1990. 21 ապրիլի:

թե այսօրվա Թուրքիան չի կարող պատասխանատու նկատվել Օսմանյան կայսրության հայերի ողբերգության և շեշտում է, թե պատմական դեպքը որպես ցեղասպանություն ճանաչելը ո՛չ քաղաքական, ո՛չ իրավական և ո՛չ էլ նյութական պահանջներ է առաջադրում Թուրքիային[1]:

Այսպիսով, ուղղակի մերժվում է փոխհատուցումը: Ավելին, «այսօրվա Թուրքիան» ձերբազատվում է պատասխանատվությունից: Նրանից միայն պահանջվում է ճանաչել ցեղասպանության փաստը և քաղաքական երկխոսություն սկսել հայերի հետ (3-րդ կետ), հաջորդ կետում շեշտելով, որ մերժումը «երիտթուրքերի» օրոք հայ ժողովրդի նկատմամբ գործադրված ցեղասպանության, Հունաստանի հետ ունեցած տարաձայնությունների մեջ միջազգային օրենքի կիրարկման նկատմամբ իր միջամտությունը, Կիպրոսում գրավման ուժերի գոյության դրժումը, ինչպես նաև լիիրավ պառլամենտական դեմոկրատիայի, անհատական և հավաքական ազատությունների, մանավանդ կրոնական ազատության, պակասը այդ երկրում անշրջանցելի արգելքներ են հանդիսանում Թուրքիան՝ Հասարակապետության (Եվրոպական տնտեսական միավորման- Հ.Հ.) մեջ ընդունելու կարելիության համար»[2]: Բանաձևը Թուրքիային կոչ է անում արդարամիտ վարվել իր տարածքում ապրող «հայ փոքրամասնության հետ, ինչ վերաբերում է նրանց ինքնությանը՝ լեզվին, կրոնին, մշակույթին ու դպրոցական դրությանը և շեշտակիորեն խնդրում գործադրել Թուրքիայում գտնվող հայկական կրոնական մարտադրապետական ժառանգության վրա» և այլն[3]: Թուրքիային կոչ է արվում նաև հարգել ոչ մահմեդական փոքրամասնությունների պաշտպանության վերաբերյալ հոդվածները, համաձայն 1923 թ. Լոզանի պայմանագրի 37-րդ և 45 –րդ հոդվածների, այսինքն՝ այն պայմանագրի, որը փորձեց մեկընդմիշտ փակել Հայ դատը և ի վերջո մերժեց հայերի՝ Հայրենիք վերադառնալու իրավունքը, մինչև իսկ Թուրքիայում «Հայկական օջախ» ունենալու ձևով:

Բանաձևից կարելի է ստանալ այն տպավորությունը, թե այն ընդունողների պատկերացմամբ, ցեղասպանության ժամանակ հայերի բռնագաղթ չի եղել և հայերն այսօր էլ ապրում են Թուրքիայում իբրև ազգային փոքրամասնություն և խնդիրը՝ սոսկ նրանց մարդկային երաշխավորված իրավունքների ապահովումն է: Շատ բարձր գնահատելով Եվրա-

1 «Պայքար», շաբաթաթերթ. 1987, 18 հուլիսի:
2 Նույն տեղում:
3 Նույն տեղում:

սյառլամենտի Հայկական բանաձևը, այնուհանդերձ, չենք կարող չնշել, որ մեզ պետք է ցեղասպանության փաստի այնպիսի ճանաչում, որը նաև ճանաչում է դրա հետևանքների դիմաց փոխհատուցում՝ վերապրածներին և նրանց սերունդներին, ամենից առաջ գոնե նրանց՝ իրենց Հայրենիք՝ Արևմտյան Հայաստան, վերադառնալու իրավունքը: Ինչ վերաբերում է ցեղասպանության կանխարգելման վերաբերյալ կոնվենցիային, ապա՝ տեղահանված ժողովրդին փոխհատուցում տալու հարցում նրա լռությունը, թերևս, կարելի է բացատրել այն հանգամանքով, որ փաստաթղթի նախագիծը կազմել էր լեհական հրեա, իրավագիտության ամերիկյան պրոֆեսոր Ռաֆայել Լեմկինը, որն առաջինն է շրջանառության մեջ դրել «գենոցիդ» հասկացությունը 30-ական թթ. կեսերին: Այդ պատճառով կոնվենցիայի վրա դրոշմվել է հրեական կնիքը: Բնականաբար, 6 միլիոն հրեաների ոչնչացումը հիտլերյան Գերմանիայում ու նրա բռնազավթած երկրներում, ինչպես նաև հիտլերականների ցեղասպան գործողությունները սլավոնների, գնչուների և այլ ժողովուրդների նկատմամբ կապված չէին տարածքային հարցերի և հայրենադարձության հետ, ինչպես հայերի պարագայում: Իսկ կոնվենցիան ընդունվեց Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ Նյուրնբերգյան դատավարության տպավորության ներքո: Այն ժամանակ հիտլերականների կողմից տարագրվածներն արդեն վերադարձել էին իրենց նախկին բնակության վայրերը: Ինչ վերաբերում է նյութական փոխհատուցմանը, ապա Գերմանիայի Ֆեդերատիվ հանրապետությունն ընդունեց հրեաների ցեղասպանության փաստը՝ զղջումով ու ափսոսանքով և հրեաներին վճարեց դրա դիմաց:

Վերադառնալով հայերի ցեղասպանության հարցին, ցանկանում ենք ընդգծել, որ թուրքական մենթալիտետը ոչ մի կերպ հակված չէ այն ճանաչելու, իսկ առանձին «ազատամիտ» և «արդարամիտ» թուրք մտածողները, եթե, մինչև իսկ վերապահումներով, ընդունում են հայերի ցեղասպանության փաստը, ապա միայն՝ առանց տարածքային և նյութական փոխհատուցման պայմանի, պահպանելով քար լռություն հայերի՝ Արևմտյան Հայաստան վերադառնալու խնդրի առթիվ: Այսպես. ամերիկացի Ռոբերտ Քալինը՝ Վիրջինիայի համալսարանի հոգեբանության պրոֆեսոր, ազգությամբ թուրք (կիպրոսցի) Վամիկ Վոլկանի՝ ազգամիջյան ատելությունը հոգեբանական թերապիայի միջոցով բուժելու տեսությանը նվիրված հոդվածում գրում է, որ թուրք հոգեբանը հակադրվում է Զիգմունդ Ֆրեյդի տեսակետին, որը վերջինս արտահայտել է Ալբերտ

Էյնշտեյնից 1932 թ. ստացած նամակի պատասխանում: Նկատի ունենալով ատոմային զենքի ստեղծման իրական հեռանկարը, մեծ ֆիզիկոսը և մարդասերը հարցրել է Ֆրեյդին.

-Հնարավո՞ր է մարդու հոգեբանական զգացումը կառավարել այնպես, որ վերանա ատելության և կործանելու պսիխոզը: Եվ Ֆրեյդը պատասխանել է՝ «Ամենևին», քանզի, նրա կարծիքով, մարդը սպանում է ներքին ագրեսիվ բնազդով, որը երբեք չի անհետանում: Մարդկային բնության նկատմամբ իր հոռետեսական տեսակետի պատճառով, գրում է Ռ. Քալլինը, Ֆրեյդը բացառում էր անհատների նկատմամբ կիրառվող հոգեբանական թերապիայի փոխադրումը միջազգային և էթնիկական հարաբերությունների բնագավառը, և գրում էր Էյնշտեյնին, որ խաղաղության պահպանումը, պատերազմների և էթնիկական բռնությունների կանխումը քաղաքագետների, դիվանագետների և Ազգերի Լիգայի գործն է:

Ահա, հակադրվելով այս տեսակետին, Վամիկ Վոլկանը գտնում է, որ ողբերգություն ապրած ազգերը, ինչպես և անհատները, կարող են ձերբազատվել էթնիկական ատելությունից, եթե ավարտեն սգո գործընթացը: Իսկ դա պահանջում է, որ հարևանները, մասնավորապես նա, ով վնաս է պատճառել մյուսին, իմանան, թե ինչ է տեղի ունեցել և զղջան դրա համար: Զղջման վկայությունը, նրա կարծիքով, կարող է լինել հուշարձանների կառուցումը, որոնք ծառայում են իբրև ազգային վշտի աճյունասափոր, ինչպես Վիետնամական պատերազմի հուշարձանը Վաշինգտոնում: Եվ Վոլկանը գտնում է, որ հայերը, օրինակ, երբեք չեն կարողացել ավարտել իրենց սուգը այն բանի առիթով, որ իրենք համարում են 1915 թ. ցեղասպանություն, որովհետև Թուրքիան երբեք չի ընդունել, որ ցեղասպանությունը տեղի է ունեցել: Դա էլ, ըստ Վոլկանի, սնում է հայերի «դաժանությունը»՝ աղրբեջանցիների հետ նրանց ներկա կոնֆլիկտում, որոնք էթնիկապես թուրքեր են»[1]: Մեկ այլ թուրք հեղինակ՝ Այհան Յալչընը, իր՝ «Թուրք-հայկական հարցի էությունը փաստաթղթերի լույսի տակ» գրքում (լույս է տեսել Ստամբուլում 1975 թ.) գտնում է, որ թուրք ժողովրդի պատասխանատվությունը հայ ժողովրդի ողբերգության առջև բարոյական է[2]:

1 «The Atlantic», 1993, August, p. 32.

2 Ժամանակակից թուրք հեղինակները հայերի և Հայկական հարցի մասին (պաշտոնական օգտագործման համար). Երևան, 1977, էջ 20:

Եվ այսպես, հայ-թուրք խնդիրը կարելի է փակել հուշարձան կառուցելով կամ բարոյական պատասխանատվությամբ, և ոչ մի խոսք հայերի՝ պատմական Հայրենիքի, այնտեղից բռնությամբ վտարված լինելու և այնտեղ վերադառնալու իրավունքի մասին:

Ոչ միայն ցեղասպանության, այլև զավթողական պատերազմից տուժած ժողովուրդներին փոխհատուցում տալու խնդիրը հույժ կարևոր է և արդիական, քանզի կան ոչ վաղ անցյալում իրենց հայրենի օջախները և ունեցվածքը ստիպողաբար՝ մահվան սպառնալիքի ներքո, լքած մարդկային զանգվածներ, որոնք սպասում են իրենց հարցի արդարացի լուծմանը: Օրինակ, 200 հազար կիպրոսցի հույներ դարձել են փախստականներ իրենց սեփական երկրում՝ 1974 թ. օգոստոսից ի վեր, երբ Թուրքիան ներխուժեց Կիպրոս և բռնազավթեց կղզու տարածքի 40%-ը, ընդ որում, կղզու այն մասը, որը տալիս էր եկամտի ավելի քան 2/3-ը: Բնականաբար, փոխհատուցում նշանակում է, որ թուրքական զավթիչները հեռանան Կիպրոսից և փախստական հույները հնարավորություն ստանան վերադառնալու իրենց օջախները և նորից տիրանան իրենց չարժական ու անշարժ գույքին:

Հայրենիք վերադառնալու գաղափարը շատ ավելի հեշտությամբ կլուծվեր, եթե բռնագաղթի ենթարկած պետությունն ընդուներ իր հանցանքը ու դրա համար պատժելիությունը և կամովին հետ ընդուներ տարագրվածներին: Խնդիրը դարձյալ ոչ հիվանդագին ձևով կարող է լուծվել, եթե բռնագաղթի ենթարկած պետության մեջ տեղի ունենան բռնագաղթի ենթարկվածների հայրենադարձությանը նպաստող ներքին փոփոխություններ՝ իշխանության գլուխ անցնեն նոր ուժեր կամ հին վարչակարգը փոխվի նորով: Սակայն, բռնագաղթի առկայությունն ինքնին հուշում է, որ Հայրենիք վերադառնալու գաղափարի իրացումը կապված է գրեթե անխուսափելի և երբեմն՝ անհաղթահարելի թվացող բարդությունների հետ, պահանջում է պետությունների համատեղ գործողություններ՝ բռնագաղթի ենթարկած պետությանը հարկադրելու հետ ընդունել տարագրվածներին ու փախստականներին՝ անվտանգության և փոխհատուցման իրական երաշխիքներով: Այդ համատեղ գործողությունները կարող են ընկալվել իբրև ճնշամիջոցներ (ռեպրեսիաներ): Ուստի, նման իրադրություններում կարևորություն է ստանում պետությունների համագործակցությունը միջազգային իրավունքի համապատասխան նորմերի ու սկզբունքների ինպերատիվությունը հաստատելու գործում:

Ժամանակակից միջազգային իրավունքը ճանաչում է մի շարք հիմնական սկզբունքներ, որոնք իմպերատիվ (պարտադիր) են պետությունների համար: Դրանք համընդհանուր ճանաչում են գտել, կազմում են միջազգային իրավունքի միջուկը և վճռող նշանակություն ունեն պետությունների միջև ծագած տարաձայնությունները հարթելիս: Մասնավորապես, այդ կարգի սկզբունքների թվին է դասվում մարդու իրավունքների և հիմնական ազատությունների հարգման սկզբունքը, որն, ինչպես տեսանք, անմիջականորեն աղերսվում է բռնությամբ հայրենազրկվածների՝ իրենց հայրենի օջախները վերադառնալու իրավունքի հետ: Առայժմ չկա որևէ փաստաթուղթ, որը սպառիչ կերպով շարադրեր միջազգային իրավունքի գլխավոր կամ հիմնարար սկզբունքները: Բայց դրանց մի մասը շարադրված է ՄԱԿ-ի կանոնադրության մեջ և մի շարք այլ փաստաթղթերում: 1970 թ. հունվարի 24-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունեց «Հռչակագիր միջազգային իրավունքի սկզբունքների մասին, որոնք վերաբերում են պետությունների միջև բարեկամական հարաբերություններին և համագործակցությանը՝ համապատասխան ՄԱԿ-ի կանոնադրության»: Այս փաստաթուղթը պարունակում է յոթ սկզբունք, այդ թվում՝ այն սկզբունքը, որը պետություններին պարտավորեցնում է համագործակցել միմյանց հետ՝ ՄԱԿ-ի կանոնադրությանը համապատասխան, ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման, պետությունների կողմից՝ ՄԱԿ-ի կանոնադրության համաձայն ստանձնած պարտավորությունները բարեխղճորեն կատարելու գործում[1]:

Այստեղ մենք թվարկեցինք յոթ խնդիրներից միայն երեքը, որոնք կարող են մեկնաբանվել որպես բռնագաղթված ժողովրդի՝ իր հայրենիքը վերադառնալու իրավունքը հաստատելուն օգնող հիմնադրույթներ: Այնուամենայնիվ, հռչակագրի մեջ բացակայում է մարդու իրավունքները հարգելու հիմնարար սկզբունքը, որի տեսակետից կարելի է անառարկելիորեն հաստատել բռնագաղթի ենթարկվածների՝ հայրենիք վերադառնալու իրավունքը, թեև այդ սկզբունքը միջազգային իրավունքի գիտակները, որպես կանոն, դիտարկում են շատ ավելի ընդհանուր առումով՝ մարդու իրավունքների ապահովման ասպարեզում բռնի հայրենազրկումն իբրև մարդու իրավունքների ամենակոպիտ խախտում դիտելու և հայրենազրկվածների՝ իրենց հայրենի օջախները վերադառնալու իրավունքը միջազգային-իրավական իմպերատիվ նորմ ճանաչելու իմաստով: Մենք տեսանք, որ Հելսինկիի եզրափակիչ ակտը, որտեղ, թվարկվող 10 սկզբունքների թվում հիշատակվում է նաև մարդու իրավունքները և հիմնական ազատությունները հարգելու մասին, նույնպես չի լրացնում այդ բացը:

Միևչդեռ, խնդիրն ավելի քան կարևոր է, քանզի, ինչպես շեշտում են միջազգային իրավունքի յոթհատորյա դասընթացի հեղինակները, կան մի շարք միջազգային-իրավական, պայմանագրային և սովորական նորմեր, որոնք ուղղակիորեն և անուղղակիորեն վերաբերում են բնակչությանը, մասնավորապես, քաղաքացիության, հանցագործներին հանձնելու, մարդու իրավունքների, օտարերկրացիների ռեժիմի հարցում: Պետություններին պարտավորեցնելով իրենց փոխհարաբերություններում գործելու որոշակի ձևով, միջազգային իրավունքն առաջադրում է պետության պարտավորությունը «ձեռնարկել այս կամ այն գործողությունները նաև իր սեփական կյանքի ոլորտում, այդ թվում՝ ընդունել իրավական ակտեր, որոնք վերաբերում են իր բնակչության իրավական և փաստական դրությանը»[1]:

Այս, միանգամայն ճիշտ եզրահանգման կողքին, նույն հեղինակները, նախկին ԽՍՀՄ-ում մարդու իրավունքների խախտումներն իրավաբանորեն արդարացնելու ակնհայտ միտումով, պնդում են, թե իբր բնակչության և մարդու իրավական դրությունն այս կամ այն պետության ներսում որոշվում է բացառապես նրա սահմանադրությամբ և ներպետական օրենսդրությամբ, սակայն ոչ միջազգային իրավունքով, թե իբր խոսքը վերաբերում է մարդու իրավունքներին, որոնք բխում են պայմանագրերից, իսկ գործնականում այդպիսի պայմանագրերը իրավունք չեն ստեղծում, այլ՝ պայմանավորվող պետությունների վրա սոսկ պարտականություն են դնում այդ իրավունքները կենսագործելու իրենց օրենսդրության միջոցով[2]: Նման սոփեստությունները, ըստ էության, ժխտելով մարդու իրավունքի նորմերի իմպերատիվ բնույթը, ստեղծում են սողանցքներ այդ բնագավառում իրավախախտումների համար: Անկարելի է համաձայնել վերոհիշյալ դասընթացի հեղինակների մեկնաբանության հետ, թեկուզև այն պատճառով, որ «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 30-րդ հոդվածում աներկբայորեն հաստատվում է, որ «Ոչինչ սույն հռչակագրում չի կարող մեկնաբանվել իբրև որևէ

1 Организация Объединенных Наций. Сборник документов, М., 1981, с. 459-469.

1 Курс международного права, т. 3, М., 1990, с. 62.
2 Курс международного права, т. 2, М., 1990, с. 158.

պետության, անձանց խմբի կամ առանձին անձանց իրավունքի ընձեռում՝ զբաղվելու որևէ գործողությամբ կամ կատարելու գործողություններ, որոնք ուղղված են սույն Հռչակագրում շարադրված իրավունքների և ազատությունների ոչնչացմանը»[1]: Ի դեպ, դասընթացի հեղինակներս իրենք քննադատում են այն արևմտյան տեսաբաններին, ովքեր ժխտում են միջազգային իրավունքի նորմատիվ բնույթը և ընդգծում, որ «ներկայումս միջազգային իրավունքի նորմատիվությունը կճշանակեր ժխտել ակնբախ ճշմարտությունը»[2]:

Միջազգային իրավունքների որոշ մասնագետների կարծիքով, մարդու իրավունքների հարգման սկզբունքների բովանդակությունը հանգում է հետևյալ երեք պահանջներին՝ բոլոր պետությունները պարտավոր են.

ա) հարգել իրենց տարածքում եղած բոլոր անձանց հիմնական իրավունքներն ու ազատությունները,

բ) թույլ չտալ խտրականություն սեռի, լեզվի և կրոնի հատկանիշների հիման վրա,

գ) ապահովել մարդու իրավունքների և հիմնական ազատությունների համընդհանուր հարգմանը և համագործակցել միմյանց հետ՝ այդ նպատակին հասնելու գործում[3]:

Այս պահանջները բնակչության իրավունքների հետ ուղղակի կապ չունեն: Սակայն, եթե միջազգային իրավունքը բնակչության դրությունը չի կարգավորում ուղղակիորեն, ապա կարող է ներազդել դրա կարգավորման վրա միջնորդված ձևով: Այդ իմաստով, մարդու իրավունքներին և հիմնական ազատություններին վերաբերող միջազգային-իրավական նորմերը ամենահամապատասխան են բնակչության կամ նրա առանձին հատվածների հարցերը կարգավորելու համար: Հետևաբար, մեր թվարկած պահանջներից երրորդը կարող է մեկնաբանվել իբրև պետությունների պարտավորությունը՝ համագործակցելու տեղահանված և բռնագաղթված վանդվածների իրավունքների վերականգնման գործում: Իսկ ՄԱԿ-ի անդամ պետությունների կողմից իրենց պարտավորությունները բարեխղճորեն կատարելը պայման է, «որպեսզի նրանց բոլորի համար համատեղ ապահովվեն իրավունքները և առավելությունները, որ-

1 *Международная защита прав и свобод человека, с. 20.*

2 *Курс международного права, т. 1, М., 1990, с. 24.*

3 *Международное право, под редакцией Г. И. Тункина, с. 126, տես նաև Курс международного права, т. 2, с. 159-160.*

րոնք բխում են կազմակերպության անդամների կազմին պատկանելուց»[1]:

Հասկիվ թե հարկ կա ապացուցելու, որ բարեխղճությունը կամավոր կերպով դրսևորվող և բարոյական երևույթ է և, այդ պատճառով բավարար չէ ապահովելու պետությունների պատասխանատվությունը միջազգային-իրավական նորմերի հարգման խնդրում: Բավական է նշել, որ պետությունների միջազգային-իրավական պատասխանատվության գլխավոր հիմքը միջազգային իրավունքի խախտումներն են, որպեսզի պարզ դառնա այդ սկզբունքի արտակարգ կարևորությունը:

Ժամանակակից միջազգային իրավունքը տարբերակում է պետությունների կողմից կատարվող միջազգային իրավախախտումների երկու տեսակ՝ միջազգային հանցագործություններ և զանցանքներ: Երկու դեպքում էլ առաջ է գալիս միջազգային-իրավական պատասխանատվության երկու տեսակ՝ քաղաքական (ոչ նյութական) և նյութական: Հաճախ դրանք հանդես են գալիս միաժամանակ, ինչպես բռնագաղթի և ցեղասպանության պարագայում:

Միջազգային իրավախախտումները հաճախ կատարվում են գործադիր մարմինների կողմից՝ կառավարությունից մինչև իշխանության ստորադաս, տեղական մարմինները: Գլխավորապես նրանց վրա է ընկնում միջազգային հանցագործությունների մեղքը, որպիսիք են գաղութատիրությունը, ապարտեիդը, ցեղասպանությունը և այլն[2]:

Իշխանության ստորադաս մարմինները կարող են մեղսակից դառնալ միջազգային ոճրի, կատարելով բարձրագույն իշխանության հրամանները, չմոռանալով նաև սեփական նախաձեռնության մասին: Հաճախ դրա համար լայն ասպարեզ են թողնում հենց կենտրոնից եկած հրամանները: Այսպես, Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթի՝ 1915 թ. սեպտեմբերի 9-ին Հալեպի կուսակալությանը հղած ծածկագիր հրամանում մասնավորապես ասված էր.

«Հայերու համար Թուրքիո հողին մեջ ապրելու, աշխատելու իրավունքներ ամբողջովին ջնջված են, և այս մասին կառավարությունը, բովանդակ պատասխանատվությունը ստանձնելով, հրամայած է նույնիսկ օրորոցի մանուկները չթողուլ: Քանի մը նահանգներու մեջ այս հրամանին գործադրության արդյունքները տեսնված են: Այսպես ըլլալով հան-

1 *Конференция ООН в Сан-Франциско (25.04-26.05. 1945), сборник документов, М., 1980, с. 586.*

2 *Международное право, под редакцией Г. И. Тункина, с. 217.*

դերձ, մեզի անհայտ պատճառներով, կարգ մը մարդոց մասին քացառիկ գործողություններ կըլլան և այդ մարդիկը ուղղակի տարագրության վայրերը չղրկվելով՝ Հալեպ կը թողվին, որով կառավարությունը երկրորդ դժվարության մը կը մատնվի: Առանց անոնց պատճառաբանությունները ընդունելու, կին, թե մանուկ, ինչ որ ալ ըլլան, նույնիսկ շարժվելու անկարող եղողները հանեցե՛ք հոնկե և տեղի մի՛ տաք, որ զանոնք պաշտպանե ժողովուրդը, որ տգիտությանը բերմունքով նյութական շահերը իր հայրենասիրական զգացումներեն բարձր կը դասե և չի կրնար կառավարության այս մասին հետապնդած մեծ քաղաքությունը գնահատել: Որովհետև ուրիշ տեղեր անոտղակի կերպով կատարվող բնաջնջման գործողությունները,- խստություն, արագություն, (տարագրության ընթացքին), ճամբու նեղություններ, բշվառություն, - հոդ ուղղակի կերպով կրնան ապահովվիլ, հետևաբար՝ առանց ժամանակ կորսնցնելու, ոգի ի բռին աշխատեցեք...»[1]:

Հրամանի բովանդակությունից իսկույն պարզվում է, որ մենք գործ ունենք միջազգային հանցագործության հետ, որը միջազգային իրավունքը առանձնացնում է իբրև առավել վտանգավոր իրավախախտում, եթե նույնիսկ այն կատարվել է՝ ելնելով երկրի ներքին օրենսդրությունից[2]:

Արթուր Բեյլերյանի՝ ֆրանսիական արխիվներից հավաքած փաստաթղթերի ժողովածուում, որը հրատարակել է Սորբոնի համալսարանը, կան ականատեսների բազմաթիվ վկայություններ, որոնք հաստատում են, որ հայերի ցեղասպանությանը մասնակցել են թուրք և քուրդ խուժանը, մահմեդական հոգևորականությունը[3]:

Եթե իրավախախտումը կատարել են պետության մարմինները կամ պաշտոնական անձինք, ապա պետությունը պատասխանատու է նրանց արարքների համար, և, հետևաբար, միջազգային իրավունքի տեսանկյունից, դրանք դիտվում են իբրև պետության արարքներ և պետության պատասխանատվության հարցը վիճահարույց լինել չի կարող: Ա. Ա. Եսայանն իր՝ «Միջազգային իրավունք» դասագրքում հաստատում է, որ, ըստ միջազգային իրավունքի գործող սկզբունքի, միջազգային հանցագործության և դելիկտի (իրավախախտման) դեպքում պետությունը

1 Ա. Ամրոնյան. Մեծ ոճիրը. Բոստոն. 1921. էջ 35-36:
2 Г. И. Тункин, Вопросы истории международного права, М., 1962, с. 476-477.
3 Les Grandes Puissances. L' Empire Ottoman et les Arméniens dans les Archives francaises. (1914-1918). Paris, 1983. p. 129.

պատասխանատու է բոլոր օրենսդրական, գործադիր և դատական կենտրոնական ու տեղական մարմինների գործողությունների, միջազգային իրավունքին հակասող օրենքներ ընդունելու, իր բոլոր գործադիր մարմինների միջազգային անիրավազոր գործողությունների համար[1]:

Ա.Ա. Եսայանն ընդգծում է նաև, որ «Ներքին ազգային օրենսդրության ուժով պետությունը իրավազոր չէ հրաժարվելու իր միջազգային պարտավորություններից, ավելին, եթե առկա է կոլիզիա ներքին օրենքի և միջազգային իրավունքի միջև, պետք է նախապատվությունը տրվի միջազգային իրավունքին»[2]:

Այսպիսով, ոչ մի պետություն չի կարող խուսափել միջազգային հանցագործության համար մեղադրանքից և պատասխանատվությունից, գրանցելով այն առանձին պետական մարմինների ու գործիչների հաշվին, վկայակոչելով իր ներքին օրենսդրությունը: Մեզ ամենևին չի համոզում Գ. Ի. Տունկինի խմբագրությամբ հրատարակված «Միջազգային իրավունքի» դասագրքի (1982թ.՝ ռուսերեն, 1986 թ.՝ անգլերեն) այն տեսակետը, թե միջազգային իրավունքը սոսկ օժանդակ միջոց է մարդու իրավունքների պաշտպանության համար և «մարդու իրավունքների ապահովումը մնում է և կշարունակի մնալ հիմնականում պետությունների ներքին գործը»[3]:

Մեզ արդեն ծանոթ Ժան Բատիստ Դյուրոզելը Ա. Բեյլերյանի հրատարակած փաստաթղթերի ժողովածուի առաջաբանում հարցնում է, թե ո՞րն է հայերի ցեղասպանության հարցում թուրք ժողովրդի պատասխանատվությունը և անհատների, մասնավորապես, «Միություն և առաջադիմություն» կոմիտեի պարագլուխների պատասխանատվությունը, որոնք «ազգային կիրքը» հասցրին մինչև «վերջնական լուծումը»՝ «միաժամանակ և նողկալի, և միամիտ հավատով, թե դա թույլ կտա ստեղծելու մաքրագործված, իրեն թուլացնող «օտար մարմինների» մահվամբ ազատագրված ժողովուրդ»: Այնուհետև Դյուրոզելը շարունակում է, «Ես ասում եմ միամիտ, քանզի երբեք չի տեսնվել կատարելապես իրագործված ցեղասպանություն, քանզի փաստ է, որ կան ԽՍՀՄ-ի հայերը, Սփյուռքի հայերը, կա սերունդների չմարող ատելությունը, որը կարող է տասնամյակներ, նույնիսկ դարեր հետո նետվել կատաղի ռևանշի»[4]:

1 Ա. Ա. Եսայան. Միջազգային իրավունք: Ընդհանուր մաս. հ. 2. Երևան. 1983. էջ 302:
2 Ա.Ա. Եսայան. նշվ. աշխ. էջ 302-303:
3 Международное право, под ред. Г. И. Тункина, с. 347.
4 Les Grandes Puissances. L Empire Ottoman et les Armeniens dans les Archives francaises.(1914-1918). pg. VII-VIII (preface).

Միջազգային իրավունքը պետությանը չի ազատում պատասխանատվությունից, եթե միջազգային հանցագործության համար մեղավորները պաշտոնատար անձինք են, որոնցից կազմված են պետության մարմինները: Պետությունն իր առանձնահատկությունների պատճառով կարող է գործողություններ կատարել կամ ցուցաբերել անգործություն հենց պաշտոնատար կամ իշխանությամբ օժտված անհատների միջոցով: Ընդ որում, միջազգային-իրավական պատասխանատվության հարցը ծագելիս, ոչ մի էական նշանակություն չունի իրավախախտումը կատարած մարմնի տեղը տվյալ պետության համակարգում: Պատասխանատվության հիմքերի հիմքը միջազգային իրավունքի գերակայությունն է պետությունների ներքին օրենսդրության նկատմամբ: Եվ դա միանգամայն, որոշակիորեն հաստատված է ՄԱԿ-ի կանոնադրությամբ, որը ժամանակակից միջազգային իրավունքի առավել կարևոր աղբյուրներից է:

Ըստ ՄԱԿ-ի կանոնադրության, որը ամփոփում է միջազգային իրավունքի հիմնարար նորմեր ու սկզբունքներ. «ՄԱԿ-ի յուրաքանչյուր անդամ-պետություն պարտավոր է իր հարաբերություններում ուրիշ պետությունների հետ (ինչպես կազմակերպության անդամ, այնպես էլ ոչ անդամ) պահպանել ՄԱԿ-ի կանոնադրության մեջ ամրագրված սկզբունքները և նույն բանը պահանջել պայմանադիր կողմերից: Դրան հարկ է ավելացնել, որ Կանոնադրությունն ուղղակի նախատեսում է պետությունների Կանոնադրությամբ նախատեսված պարտավորությունների առաջնությունը նրանց բոլոր այլ պարտավորությունների հանդեպ»[1]:

«Պետությունների Կանոնադրությամբ», ինչպիսին է ՄԱԿ-ի կանոնադրությունը (և ոչ թե առանձին պետությունների «կանոնադրություններով»), նախատեսված պարտավորությունների կարևորությունից էլ բխում է պետությունների պատասխանատվությունն իրենց գործողությունների կամ անգործության համար:

Տալով միջազգային-իրավական պատասխանատվության ընդհանուր բնութագիրը՝ «Միջազգային իրավունքի դասընթաց» յոթհատորյակի հեղինակները գրում են. «Պատասխանատվության պրոբլեմը միջազգային իրավունքում անմիջականորեն կապված է միջազգային իրավունքի գործառնության, միջազգային խաղաղության և իրավական կարգուկանոնի ամրապնդման հետ»[2]: Միջազգային-իրավական պատասխանատվությունը անհրաժեշտ միջոց է ապահովելու միջազգային իրավունքի նորմերի պահպանումը և վերականգնելու խախտված միջազգային հարաբերությունները[1]:

ՄԱԿ-ի միջազգային իրավունքի հանձնաժողովը, որը զբաղվում է միջազգային իրավունքի օրենքների համակարգման (կոդիֆիկացիա) գործով, և դեռևս 1956 թ. սկսել է պետությունների պատասխանատվության նորմերի համակարգման աշխատանքները, իր համապատասխան նախագծերում անդրադառնում է միջազգային իրավունքի նորմերի իմպերատիվ բնույթի հարցին, հատկապես, երբ դա վերաբերում է միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը, ժողովուրդների ինքնորոշման իրավունքին, անձի պաշտպանությանը: Հատկապես վտանգավոր միջազգային-հակաիրավական արարքներ են ճանաչված ագրեսիան, գաղութատիրությունը, ցեղասպանությունը, ապարտեիդը, որոնց համար պահանջվում է պատասխանատվության խստագույն ռեժիմ: Իսկ միջազգային-իրավական պատասխանատվությունը նշանակում է պատժամիջոցների կիրառում միջազգային իրավախախտման համար: Ընդ որում, պատժամիջոցները ընդգրկում են ինչպես փոխհատուցման, այնպես էլ պատժի տարրեր: «Պետությունների պրակտիկայի, բազմակողմ կոնվենցիաների, Միջազգային իրավունքի հանձնաժողովի փաստաթղթերի, ինչպես նաև դոկտրինայի հետևությունների վերլուծությունը վկայում է, որ ագրեսիան, ուժով գաղութային տիրապետության պահպանումը, ինչպես նաև ցեղասպանությունը, ապարտեիդը և պետությունների մի քանի այլ հատկապես վտանգավոր և ծանր արարքները բերում են պատասխանատվության, հատկապես՝ խիստ ռեժիմի կիրառման»[2]:

Իրավաբանական պատասխանատվությունը միջազգային հանցագործության կամ իրավախախտման համար կարող է արտահայտվել տուժած կողմի իրավունքների վերականգնման, փոխհատուցման կամ իրավազանցին պատժելու ձևով: Միջազգային-իրավական պատասխանատվության միչև իսկ պատժիչ գործառնությունը չի հակասում պետությունների ինքնիշխանության (սուվերենիտետի) հարգման սկզբունքին: Երկար ժամանակ միջազգային-իրավական պատասխանատվության հարցը քննարկվել է սոսկ պետությունների հարաբերություններում տեղի ունեցած իրավախախտումների կապակցությամբ:

1 ООН и актуальные международные проблемы, с. 15.
2 Курс международного права, т. 3, с. 189.

1 Նույն տեղում, էջ 190:
2 Курс международного права, т. 3, с. 195.

Մինչդեռ դրանք կարող են և հաճախ տեղի են ունենում պետականություն չունեցող ժողովուրդների նկատմամբ և պետության ներսում: Օրինակ. պատմությունն անհերքելիորեն ապացուցել է, որ ցեղասպանությունը և ապարտեիդը հաճախ դրսևորվում են ներպետական քաղաքականության ձևով (հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, ապարտեիդը աֆրիկացիների նկատմամբ Հարավ-Աֆրիկյան հանրապետությունում): Միջազգային իրավունքի զարգացմանը համընթաց միջազգային-իրավական պատասխանատվության ինստիտուտը սկսեց տարածվել ոչ միայն ինքնիշխան պետությունների, այլև միջազգային իրավունքի մյուս սուբյեկտների վրա: Ընդ որում, ինչպես նշված է Միջազգային իրավունքի հանձնաժողովի մշակած՝ պատասխանատվության մասին հոդվածների նախագծի 4-րդ հոդվածում. «Պետության արարքը կարող է որակվել իբրև միջազգային-հակաիրավական՝ սոսկ միջազգային իրավունքի հիման վրա: Այդպիսի որոշման վրա չի կարող ազդել և ճանաչվել օրինաչափ այդ նույն արարքի որակումը ըստ ներպետական իրավունքի»[1]: Այստեղ, ինչպես և քրեական իրավունքում, գոյություն ունի հանցակազմ, որի տակ հասկացվում է որոշակի իրավախախտման հանցանշանների ամբողջությունը:

Իբրև հանցակազմի բացակայության հիմք չի կարող ընդունվել այն իրողությունը, որ պետությունը տվյալ դեպքում կաշկանդված չի եղել միջազգային պարտավորությամբ, որը թելադրում էր գործել այլ կերպ, եթե խոսքը վերաբերում է միջազգային հանցագործություններին: «Պարտավորությունները, որոնց խախտումը կազմում են միջազգային հանցագործությունները, ունեն իմպերատիվ բնույթ և բխում են միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներից»[2]: Այնուհետև, պարզաբանելով այս արտահայտության կարևոր դրույթը, «Միջազգային իրավունքի դասընթաց»-ի հեղինակները միանգամայն որոշակիորեն շեշտում են. «Միջազգային իմպերատիվ պարտավորությունների դեմ ծանր ոտնձգությունների դեպքում, հազիվ թե կարող են գոյություն ունենալ այդպիսի ոտնձգությունների համար պատասխանատվությունը բացառող ինչ-ինչ հանգամանքներ:

Մասնավորապես, այդպիսի իրավունքների խախտման հետևանքով միջազգային հանցագործությունները կանխամտածված արարքներ են, որոնք բացառում են մեղքի բացակայությունը վկայող հանգամանքների

1 Курс международного права, т. 3, с. 205.
2 Նույն տեղում:

(դիպված, անհաղթահարելի ուժ, աղետ) վկայակոչումը: Միջազգային հանցագործություններ կատարելու դեպքում պետության պատասխանատվությունը բացառելու հանգամանքների բացակայությունը հաստատվում է, ինչպես միջազգային պրակտիկայի դրույթներով, այնպես էլ դոկտրինալական հետևություններով[1]:

Այստեղից հետևում է, որ միջազգային հանցագործություն, օրինակ՝ ցեղասպանություն, կատարած պետության նկատմամբ միջազգային պատժամիջոցների կիրառումը պարտադիր է (առանց զինված ճնշամիջոցների և իրավունքի ոլորտի սահմանափակումների) և չի կարելի խուսափել դրանցից, վկայակոչելով ինքնապաշտպանությունը, անհաղթահարելի ու չնախատեսված դեպքը, աղետը, անհրաժեշտության վիճակը, այսինքն՝ այն հանգամանքները, որոնց առկայության դեպքում միջազգային իրավունքը ճանաչում է իրավախախտման հանցակազմի բացակայությունը:

Ցեղասպանության և դրա հետևանքների դեպքում, միանգամայն անբավարար է հանցագործ պետության բարոյա-քաղաքական պատասխանատվությունը, ինչպես նաև ոչ նյութական պատասխանատվությունը: Այստեղ ընդունելի է միջազգային իրավունքի այն մասնագետների կարծիքը, ովքեր տալիս են լայն մեկնաբանություն իրավախախտ պետության դեմ միջազգային պատժամիջոցների կիրառմանը՝ ներառելով նախկին իրավիճակի վերականգնումը (status quo ante), այսինքն՝ ռեստորացիան և ռեստիտուցիան, ինչպես նաև պատասխանատվության այլ ձևերը՝ սատիսֆակցիան (բավարարումը) և հատկապես՝ ռեպարացիան (փոխհատուցումը):

Որպեսզի իրավախախտին ստիպեն իրապես կրել պատասխանատվությունը, միջազգային իրավունքը թույլատրում է կիրառել նրա նկատմամբ հարկադրական միջոցներ՝ ռետորսիաներ (օրինաչափ հարկադրական միջոցներ՝ առանց զինված ուժի գործադրման և հասցված վնասի ոչ համաչափ, բայց համամասնային հատուցում), ճնշամիջոցներ (դարձյալ առանց զինված ուժի կիրառման), դիվանագիտական հարաբերությունների խզում, միջազգային կազմակերպություններում արտոնություններից և անդամության իրավունքից զրկում, տնտեսական պատժամիջոցներ (առևտրական էմբարգո) և այլն: Ավելին, «Միջազգային հանցագործություն կատարած պետության պատասխանատվու-

1 Курс международного права, т. 3, с. 225-226.

թյան հատուկ ձև կարող է հանդիսանալ նրա տարածքի մի մասի հանձնումը տուժած սուբյեկտներին՝ նրանց անվտանգության երաշխավորման նպատակով.... : Դա կարող է ծառայել իբրև վնասի փոխհատուցում, որը չի կարող փոխհատուցվել ուրիշ եղանակներով»[1]:

Ցեղասպանության և դրա հետևանքով կատարված բռնագաղթի դեպքում, դա կլինի փոխհատուցման ամենաէական և լավագույն միջոցը, որը տարագրվածներին թույլ կտա իրականացնելու Հայրենիք վերադառնալու գաղափարը:

---

1 Курс международного права, т. 3, с. 241.